

« Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 56/1

18 դեկտեմբերի 2012թ.

Քննարկվեց «Բաբեկ» ՍՊԸ 30.11.2012թ-ի թիվ 07 և 03.11.2012թ-ի թիվ 08 գրություններով բերված բողոքը « ԿԱ ՊԵԿ Արաբկիրի ՀՏ պաշտոնատար անձանց գործողությունների դեմ:

«Բաբեկ» ՍՊԸ (այսուհետ նաև ընկերության) 30.11.2012թ-ի թիվ 07 գրությունում մասնավորապես նշված է.

Քանաքեռ-Զեյթուն ՀՏ կողմից 16.08.2011թ-ին կազմվել է տեղեկանք, որի հիման վրա կնքվել է տեսչության և ընկերության միջև հարկային պարտավորությունների մարման ժամանակացույց: Սակայն, ժամանակին 653.330 դրամ պարտադիր սոցիալական ապահովության վճարը կատարելուց հետո փետրվար ամսից, չի կիրառվում արտոնություններով տույժերի մարումը Արաբկիրի ՀՏ կողմից, պատճառաբանելով, որ տեղեկանքում Քանաքեռ-Զեյթուն ՀՏ կողմից չի ներառվել պետական տուրքի գծով պարտավորությունը՝ գումարով 100.000 դրամ: Հետևաբար վերջինս չի ներառվել նաև պարտավորությունների մարման ժամանակացույցում և ընկերության կողմից մարվել են այն պարտավորությունները, որոնք նշված են եղել ժամանակացույցում: Ի դեպ, 2012թ-ի հունվարի 1-ից Քանաքեռ-Զեյթուն ՀՏ լուծարման պատճառով ընկերությունը որպես հարկատու տեղափոխվել է Արաբկիրի ՀՏ: Հարկ են համարում նշել, որ պարտավորությունների մարման ժամանակացույցի պահանջներն ընկերության կողմից կատարվել է ճշտությամբ, որը Արաբկիրի ՀՏ կողմից հաշվի չի առնվում: Ի վերջո պետական տուրքի պարտքը ժամանակացույցում չի ներառվել Քանաքեռ-Զեյթուն ՀՏ համապատասխան աշխատակիցների կողմից, որոնք հանդիսացել են «Կազմակերպությունների և անձատ ձեռնարկատերերի համար հարկային և պարտադիր վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին» « օրենքը կիրառող մարմնի ներկայացուցիչները: Ընկերությունը որպես կատարող ժամանակացույցը ընդունել է որպես ճշգրիտ փաստաթուղթ և 6 ամսվա ընթացքում մարել է դրանում արտացոլված հարկային պարտավորությունները: Ի դեպ, ընկերությունը կվճարեր նաև 100.000 դրամ պետական տուրքի գումարը, եթե տեսչության կողմից այն ներառվեր ժամանակացույցում, որի արդյունքում կմարվեր նաև 182.000 դրամ տույժի գումարը (որը ենթակա է վճարման):

Բազմիցս դիմելով Արաբկիրի ՀՏ համապատասխան բաժին ընկերությունը ստացել է բացասական պատասխան: Մասնավորապես, 17.10.2012թ-ին նամակով ընկերությունը դիմել է Արաբկիրի ՀՏ պետին, սակայն գրությանը պատասխան չի տրվել և մերժման վերաբերյալ հայտնվել է բանավոր կարգով: Այսինքն ստացվում է, որ ընկերությունը զրկվել է ժամանակացույցում ամրագրված արտոնությունից՝ գումարով 718.333 դրամ:

Ելնելով վերոգրյալից ընկերությունը խնդրում է սույն հարցը քննարկել գանգատարկման հանձնաժողովում և հարցին տալ համապատասխան լուծում:

«Բաբեկ» ՍՊԸ 03.11.2012թ-ի թիվ 08 գրությամբ ընկերությունը խնդրում է 01.01.2012թ-ի դրությամբ առկա 7.844.016 դրամ ԱԱՀ-ի գերավճարից հաշվանցել 4.366.600 դրամ հարկային պարտավորությունների դիմաց:

« ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով «Բաբեկ» ՍՊԸ և « ԿԱ ՊԵԿ Արաբկիրի ՀՏ ներկայացուցիչների բերված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերը և ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Համաձայն «Կազմակերպությունների և անձատ ձեռնարկատերերի համար հարկային և պարտադիր վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին» « օրենքի, « ԿԱ ՊԵԿ Քանաքեռ-Զեյթուն ՀՏ կողմից 16.08.2011թ-ին կազմվել է տեղեկանք՝ «Բաբեկ» ՍՊԸ-ի 2009թ-ի դեկտեմբերի 31-ը ներառող և (կամ) դրան նախորդող հաշվետու ժամանակաշրջանների

արդյունքներով հարկային պարտավորությունների վերաբերյալ: Վերջինիս համաձայն <Բաբել> ՍՊԸ-ի 2009թ-ի դեկտեմբերի 31-ը ներառող և (կամ) դրան նախորդող հաշվետու ժամանակաշրջանների արդյունքներով հարկային պարտավորությունների չափը կազմել է ընդամենը 1.371.663 դրամ, այդ թվում՝ ապառք 653.330 դրամ, տույժ 718.333 դրամ: Որից հետո <Բաբել> ՍՊԸ-ի տնօրենի և ՀՀ ԿԱ ՊԵԿ Քանաքեռ-Ձեյթուն ՀՏ (ի դեմս տեսչության պետի) միջև 16.08.2011թ-ին կնքվել է մինչև 50 միլիոն դրամ պարտավորությունների մարման ժամանակացույց (այսուհետ ժամանակացույց):

Ժամանակացույցի 1-ին կետի համաձայն, ընկերությունը պարտավորվել է 2009թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա 1.371.663 դրամ պարտավորություններից, այդ թվում՝ ապառք 653.330 դրամ, տույժ 718.333 դրամ, ապառքը մարել ժամանակացույցով սահմանված ժամկետներում և չափով:

Ժամանակացույցի 2-րդ կետով սահմանվել է, որ ընկերությունը ժամանակացույցով սահմանված ապառքները փաստացի մարելու դեպքում ազատվում է հարկային օրենսդրությամբ հաշվարկված տույժերից, տուգանքներից:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ ընկերությունը ժամանակացույցով սահմանված ժամկետներում և չափով կատարել է ժամանակացույցով ստանձնած պարտավորությունները, Հանձնաժողովը գտնում է, որ կիրառելի է <Կազմակերպությունների և անձատ ձեռնարկատերերի համար հարկային և պարտադիր վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին> ՀՀ օրենքի դրույթները, այն է՝ ընկերությունն ազատվում է հաշվարկված տույժերից՝ գումարով 718.333 դրամ:

Ինչ վերաբերվում է ընկերության 03.11.2012թ-ի թիվ 08 գրություններով բերված խնդրանքին, կապված 01.01.2012թ-ի դրությամբ առկա 7.844.016 դրամ ԱԱՀ-ի գերավճարից 4.366.600 դրամ հարկային պարտավորությունները հաշվանցելուն, ապա այն իրատեսական չէ, քանի որ հիշատակված 7.844.016 դրամը հանդիսանում է ԱԱՀ-ի դեբետային մնացորդ, հիմք՝ <Ավելացված արժեքի հարկի մասին> ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին պարբերության դրույթները:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

### ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ԿԱ ՊԵԿ Արաբկիրի հարկային տեսչությանը.

կատարել <Բաբել> ՍՊԸ պարտավորությունների վերահաշվարկ՝ նվազեցնելով 16.08.2011թ-ի ժամանակացույցում արտացոլված տույժի գումարը՝ 718.333 դրամի չափով:

Հանձնաժողովի նախագահ



S.ԲԱՐՍԵՂՅԱՆ